ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-2-2-Ա

ք. Երևան 16.03.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի մարտի 16-ի նիստում քննարկեց 2016 թվականի փետրվարի 5-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Նովարթիս ԱԳ ընկերության (4002 Basel, Switzerland, CH) «ЭБЕВЕ» (հայտ No20141787) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոր ձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված բառային ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «EBEWE NEURO PHARMA» (Ebewe Neuro Pharma GmbH Mondseestraße 11 A-4866 Unterach (AT), N 997398, N 1000721) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 115-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի, 117-րդ կետի 2-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն համեմատվող բառային ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվում է նշանը կազմող մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ և նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով: Տվյալ դեպքում հայտարկված բառային ապրանքային նշանը, չնայած գրելաձևի առանձին տարբերությունների, այն է՝ այբուբենի, որի տառերով գրված է

բառը, հնչեղությամբ նման է գրանցված բառային և համակցված ապրանքային նշանների հիմնական ընկալման տարր հանդիսացող «EBEWE» բառային տարրին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու և փորձաքննության որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, քանի որ ՀՀ-ում գրանցման գործողություն ունեցող հակադրված ապրանքային նշանները (IR997398, IR1000721) չեղյալ են ճանաչվել ՀՀ-ում:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է եղել, սակայն նոր երևան եկած հանգամանքների արդյունքում ներկայացված ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 26-րդ կետի և 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքարկողի ներկայացուցիչ արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված «ЭБЕВЕ» (հայտ No20141787) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել և գրանցման վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ